AMERIABANK

07.02.2025թ.
O.AB.100.12CIB.PIED.0.2859.25

Բենեֆիցիար՝
Ջրային կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.2859.25
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Ջրային կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/5-Ա ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 26.11.2024թ. կնքված թիվ ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/5-Ա-4 պայմանագրով(այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 20,353,500.00 (քսան միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 15 հունվարի 2026թ.-ի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 10 հունիսի 2026թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (anna.sargsyan@scws.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/5-Ա-4 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝

Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou